ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՒԱՐՔՈՒԹՅԱՆ ԵՒ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ» (Կ-1133-04.08.2025-ՊԱ-011/0), «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-1133[2]-04.08.2025-ՊԱ-011/0, «ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Կ-1133[5]-04.08.2025-ՊԱ-011/0) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը

1.	**ՀՀ կառավարություն**	«Ոստիկանության բարեվարքության եւ կարգապահական կանոնագիրք» օրենքի նախագծի 8-րդ հոդվածի 3-րդ մաս և «Փրկարարական ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 8-րդ հոդվածով լրացվող 85.6-րդ հոդվածի 3-րդ մաս	Հաշվի առնելով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի լիազորությունները՝ առաջարկում ենք «Ոստիկանության բարեվարքության եւ կարգապահական կանոնագիրք» օրենքի նախագծի 8-րդ հոդվածի 3-րդ մասից և «Փրկարարական ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 8-րդ հոդվածով լրացվող 85.6-րդ հոդվածի 3-րդ մասից բացառել ոստիկանության և փրկարարական ծառայողի կողմից վարքագծի կանոնների և շահերի բախման վերաբերյալ Ոստիկանության և Փրկարար ծառայության էթիկայի հանձնաժողովների եզրակացությունները Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին բողոքարկելու հնարավորությունը:	**Ընդունվել է:** Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	

2.	**ՀՀ կառավարություն**	«Ոստիկանության բարեվարքության եւ կարգապահական կանոնագիրք» օրենքի նախագծի 11-րդ հոդված և «Փրկարարական ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 8-րդ հոդվածով լրացվող 85.26-րդ հոդվածի	«Ոստիկանության բարեվարքության եւ կարգապահական կանոնագիրք» օրենքի նախագծի 11-րդ հոդվածում և «Փրկարարական ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 8-րդ հոդվածով լրացվող 85.26-րդ հոդվածում առաջարկում ենք շտկել համարակալման հետ կապված վրիպակները:	**Ընդունվել է:** Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	
3.	**ՀՀ կառավարություն**	«Ոստիկանության բարեվարքության եւ կարգապահական կանոնագիրք» օրենքի նախագծի 42-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասեր, «Փրկարարական ծառայության	1.«Ոստիկանության բարեվարքության եւ կարգապահական կանոնագիրք» օրենքի նախագծով և «Փրկարարական ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով նախատեսված է,	**Ընդունվել է:** Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	

		կանոնագիրքը հաստատելու մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 8-րդ հոդվածով լրացվող 85.32-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասեր	որ ծառայողական քննության մասնակիցները (բացառությամբ ծառայողական քննություն նշանակելու իրավասություն ունեցող անձանց) ծառայողական քննության նյութերին և դրա արդյունքներով կազմված եզրակացությանը ծանոթանում են իրավասու ստորաբաժանման վարչական շենքում՝ ծառայողական քննություն կատարած անձի ներկայությամբ: Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք «Ոստիկանության բարեվարքության եւ կարգապահական կանոնագիրք» օրենքի նախագծի 42-րդ հոդվածի 2-րդ մասը և «Փրկարարական ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 8-րդ հոդվածով լրացվող 85.32-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «2.Ծառայողական քննություն իրականացնող անձը եզրակացությունը կազմելուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ծառայողական		

			քննության կողմերին տեղեկացնում է ծառայողական քննության նյութերին և եզրակացությանը ծանոթանալու մասին:»: 2.«Ոստիկանության բարեվարքության եւ կարգապահական կանոնագիրք» օրենքի նախագծի 42-րդ հոդվածի 3-րդ մասով և «Փրկարարական ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 8-րդ հոդվածով լրացվող 85.32-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված է. «Ծառայողական քննության կողմերը մեկօրյա, իսկ ծառայողական քննության նյութերը ծավալուն լինելու դեպքում, երկու աշխատանքային օրվա ընթացքում կարող են ծանոթանալ ծառայողական քննության նյութերին եւ եզրակացությանը, դրանցից դուրս գրել տեղեկություններ եւ ներկայացնել գրավոր միջնորդություններ»: Կարծում ենք, որ այս դրույթը բավարար չափով որոշակի չէ, մասնավորապես՝ հասկանալի չէ, թե ինչ սկզբունքով եւ ում կողմից է որոշվում՝ արդյոք		

			ծառայողական քննության նյութերը ծավալուն են, թե՝ ոչ: Ուստի առաջարկում ենք ծառայողական քննության նյութերին ծանոթանալու համար սահմանել մեկ միասնական ժամկետ: Ըստ այդմ՝ առաջարկում ենք «Ոստիկանության բարեվարքության եւ կարգապահական կանոնագիրք» օրենքի նախագծի 42-րդ հոդվածի 3-րդ մասը և «Փրկարարական ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 8-րդ հոդվածով լրացվող 85.32-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «3. Ծառայողական քննության կողմերը երկու աշխատանքային օրվա ընթացքում կարող են ծանոթանալ ծառայողական քննության նյութերին և եզրակացությանը, դրանցից դուրս գրել տեղեկություններ և ներկայացնել գրավոր միջնորդություններ:»:		
4.	**ՀՀ կառավարություն**	«Ոստիկանության բարեվարքության եւ կարգապահական	«Ոստիկանության բարեվարքության եւ կարգապահական կանոնագիրք» օրենքի նախագծի 42-րդ հոդվածի 5-	**Ընդունվել է:** Կատարվել են	

		կանոնագիրք» օրենքի նախագծի 42-րդ հոդվածի 5-րդ եւ 6-րդ մասեր, «Փրկարարական ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 8-րդ հոդվածով լրացվող 85.32-րդ հոդվածի 5-րդ եւ 6-րդ մասեր	րդ եւ 6-րդ մասերն ունեն նույն բովանդակությունը: Հետեւաբար, առաջարկում ենք Նախագծի 42-րդ հոդվածի 6-րդ մասը հանել եւ 5-րդ մասում թվարկվող անձանց շարքում լրացնել նաեւ կարգապահական խախտում կատարելու մեջ կասկածվող ոստիկանության ծառայողներին: Առաջարկը վերաբերում է նաև «Փրկարարական ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 8-րդ հոդվածով լրացվող 85.32-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերին: Միաժամանակ, առաջարկում ենք վերանայել նշված հոդվածների մասերի համարակալումը:	համապատասխան փոփոխությունները:	
5.	**ՀՀ կառավարություն**	«Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծում նոր լրացվող 4-րդ հոդված, 6-րդ հոդվածի նոր	ՀՀ ներքին գործերի նախարարության ներքին անվտանգության և հակակոռուպցիոն վարչությունը, նախարարության ձևավորմամբ պայմանավորված, իրականացնում է ոստիկանության ծառայողների, փրկարարական ծառայողների, ինչպես նաև՝ նախարարության քաղաքացիական ծառայողների	**Ընդունվել է:** Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	

		լրացվող 1-3-րդ կետեր, 7-րդ հոդվածի նոր լրացվող 1-ին կետ	կարգապահական խախտումների քննությունը: Վարչությունը հանդիսանում է նաև նախարարության գործառույթների իրականացման շրջանակներում կոռուպցիայի կանխարգելման և դրան հակազդելու մասնագիտացված կառույց: Արդյունքում, վարչության գործառույթները ձեռք են բերում առավել կարևորություն թե ազդեցության շրջանակի, թե բովանդակության առումով: Ներկայումս, վարչության պետի պաշտոնը հանդիսանում է ոստիկանությունում ծառայության գլխավոր խմբի՝ վարչության պետի պաշտոն: Մինչդեռ, գործառութային անհրաժեշտությամբ պայմանավորված, վարչությունը կարող է իրականացնել ոչ միայն հասարազոր, այլ նաև՝ ավելի բարձր պաշտոն զբաղեցնող անձանց գործունեության նկատմամբ ծառայողական քննություն, ինչպես նաև՝ կոռուպցիայի կանխարգելման և դրան հակազդելու շրջանակներում՝ հսկողություն: Ստացվում է մի իրավիճակ, երբ վարչության պետի ներկայիս		

			պաշտոնը իր կարգավիճակով չի համապատասխանում այդ պաշտոնից բխող կազմակերպական ազդեցությանը և պատասխանատվությանը: Վերոգրյալով պայմանավորված՝ առաջարկում ենք ՆԳՆ ներքին անվտանգության և հակակոռուպցիոն վարչության պետի պաշտոնը նախատեսել որպես ոստիկանությունում ծառայության բարձրագույն խմբի պաշտոն՝ «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծում կատարելով համապատասխան լրացումներ: Միաժամանակ, առաջարկում ենք փոխել «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի համապատասխան հոդվածների համարակալումը:		
6.	**ՀՀ կառավարություն**	«Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ	ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության կառուցվածքային որոշ ստորաբաժանումների հաստիքացուցակներում,	**Ընդունվել է:** Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	

		կատարելու մասին» օրենքի նախագծի 7-րդ (նոր խմբագրությամբ՝ 8-րդ) հոդվածի 2-րդ կետ	բարեփոխումներով և կառավարման արդյունավետությունը բարձրացնելու անհրաժեշտությամբ պայմանավորված, չեն նախատեսվել ավագ խմբի հաստիքներ, իսկ գործող կարգավորումների համաձայն՝ ոստիկանության գլխավոր խմբի պաշտոնների նշանակվելու համար անհրաժեշտ է ավագ խմբի պաշտոնով ծառայության ստաժ: Արդյունքում, օրենսդրական կարգավորումների բացակայությամբ պայմանավորված, ներկայումս միջին խմբի պաշտոն զբաղեցնող ծառայողները չունեն ծառայողական առաջխաղացման իրավական հնարավորություն: Ուստի, տվյալ ծառայությունում ներգրավված ծառայողներին առաջխաղացման (գլխավոր խմբի պաշտոններում նշանակվելու) հնարավորություն ընձեռնելու համար առաջարկում ենք գլխավոր խմբի պաշտոններում նշանակվելու հնարավորություն տալ նաև այն ծառայողներին, որոնք մինչև նշանակումը առնվազն 8 տարի զբաղեցրել են միջին խմբի պաշտոն:		

			Ըստ այդմ, առաջարկում ենք «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 7-րդ (նոր խմբագրությամբ՝ 8-րդ) հոդվածը լրացնել 2-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ. «2) 3-րդ մասում «լրանալը» բառից հետո լրացնել «, ինչպես նաև այն ծառայողները, որոնք մինչև նշանակումը առնվազն 8 տարի զբաղեցրել են միջին խմբի պաշտոն» բառերը.»: Միաժամանակ, առաջարկում ենք փոխել նշված հոդվածի կետերի համարակալումը:		